ՆԿԱՐԱԳԻՐ

առաջարկվող ապրանքի ամբողջական

ԷԼԱՄՈԴԱ ՍՊԸ-ն ՀՀԱՆՇՕԾ-ԷԱՃԱՊՁԲ-2026/69 ծածկագրով կազմակերպված էլեկտրոնային աճուրդին մասնակցելու շրջանակում ներկայացնում է իր կողմից առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագիրը

Չափաբաժնի համար	Առաջարկվող ապրանքի		
	ֆիրմային անվանումը	արտադրողի անվանումը	տեխնիկական բնութագիրը
1	«ԷԼԱՄՈԴԱ» ՍՊԸ	«ԷԼԱՄՈԴԱ» ՍՊԸ	Դասական ձևվածքով, երկարաթև մանժետով, դասական շրջվող օձիքով, կանացի մարմնի կառուցվածքին համապատասխան (slim/regular fit) ձևացքով: Վերնաշապիկը Ապահովում է շարժումների ազատություն և հարմարավետություն երկարատև նստած աշխատանքի ընթացքում: Վերնաշապիկի ստորին եզրը կլորավուն, հետևի հատվածում փոքր-ինչ երկարացված: Երկարությունը պետք է թույլ տա վերնաշապիկը կրել ինչպես տաբատի կամ կիսաշրջազգեստի մեջ դրված, այնպես էլ դուրս թողած: Փակվածք՝ կենտրոնական կոճկվող շերտ՝ սպիտակ կոճակներով: Կոճկվածքի դասավորությունը՝ կանացի վերնաշապիկների համար նախատեսված տարբերակով: Ետևի հատվածը՝ ամբողջական, առանց դեկորատիվ տարրերի: Գույնը՝ երկնագույն (համաձայնեցնել Պատվիրատուի հետ) միատոն՝ օձիքը և թևքերի մանժետը սպիտակ: Օձիք՝ սպիտակ, շրջվող՝ կանգուն հիմքով, ձևը պահպանող միջադիր շերտով, պատրաստի լայնությունը՝ 7սմ: Թևքերը՝ ավարտվում են 5սմ պատրաստի լայնությամբ, սպիտակ, կոճկվող մանժետով Բաղադրությունը՝ Վերնաշապիկի համար

			նախատեսված խառը գործվածք ոչ պակաս քան՝ 65% պոլիեսթեր, 35% բամբակ։ Գործվածքի խտություն ոչ պակաս քան՝ 120 գ/մ²։ Բաղադրության թույլատրելի շեղումը 2%-3%։ Գործվածքի հատկություններ՝ փափուկ, շնչող, մաշակի համար հարմար, մաշվածակայուն և ձևը պահպանող։ Հաճախակի լվացումներին դիմացկուն և քիչ ճմրթվող։ Լվացումը առնվազն 40˚C ջերմաստիճանում՝ առանց գույնի կամ ձևի էական փոփոխության։ Հարթ, ոչ թափանցիկ, առանց արտահայտված փայլի։ Առջևի ձևավորում • Կրծքավանդակի աջ կողմում՝ մուգ կապույտ գույնով «1-03» գրառումը՝ կաղապարային և շրջային, ակրիլային ներկերով տպագրությամբ (չափերը համաձայնեցնել Պատվիրատուի հետ)։ • Կրծքավանդակի ձախ կողմում՝ մուգ կապույտ գույնով շտապ օգնության տարբերանշան /վեցանկյուն խաչ օձով/ կաղապարային և շրջային, ակրիլային ներկերով տպագրությամբ (չափերը համաձայնեցնել)։ Չափսերի շարք՝ չափսերի նմուշային օրինակները տրամադրվում է մատակարարի կողմից, որի հիման վրա իրականացվում է չափսերի տրամադրումը ըստ անհրաժեշտ քանակների / XS/S/M/L/XL/2XL/3XL/4XL/5 XL/։ Կարող են փոփոխվել շապիկների չափսային տվյալները՝ ներկայացված չափսերի սանդղակից ոչ ավելի, քան 15 տոկոսի չափով։ Որակի և համապատասխանության պահանջներ • Կարերը պետք է լինեն հավասարաչափ՝ առանց բաց թողնված կարաթելերի և գործվածքի ձգվածության։ • Վերնաշապիկը պետք է լինի նոր, չօգտագործված և գործարանային փաթեթավորմամբ։ • Չպետք է ունենա բծեր, պատռվածքներ, ծակվածքներ, գունային անհամապատասխանություններ կամ արտադրական այլ թերություններ։ • Կոճակները պետք է լինեն ամուր ամրացված և սպիտակ գույնի։ • Տարբերանշանները պետք է լինեն հստակ, սիմետրիկ, լվացակայուն։ • Թևքերի, օձիքի և կողային կարերի մշակումը պետք է ապահովի հարմարավետություն և երկարատև օգտագործում։ Պատվիրատուի հետ պետք է համաձայնեցնի կանացի վերնաշապիկի նմուշը, կտորի կապույտ գույնի երանգը, նստեցվածքը, չափսերը, խորհրդանշանների և գրառումների տեղադրությունը։ Յուրաքանչյուր

			մատակարարված խմբաքանակի համար մատակարար կազմակերպությունը պարտավոր է իր ֆինանսական միջոցների հաշվին ներկայացնել Հայաստանի Հանրապետությունում արտոնագրված, հավաստագրված կամ, անհրաժեշտության դեպքում, էտալոնային փորձագիտական լաբորատորիայի կողմից տրված փորձագիտական եզրակացություն՝ կտորի բաղադրության, մակերեսային խտության, գույնի կայունության և բոլոր այլ բաղադրիչների մասով: Ընդ որում գույնի կայունությունը չոր, թաց և 5 անգամ լվանալուց հետո պետք է պահպանի իր որակական հատկությունները: Նմուշառումը պետք է իրականացվի մատակարարված խմբաքանակից՝ պատվիրատուի պահեստից մատակարարի և լաբորատորիայի կողմից գործուղված համապատասխան ներկայացուցչի մասնակցությամբ: Ապրանքը պիտի լինի նոր և չօգտագործված: Լոգոներով տրամադրվում են Պատվիրատույի կողմից:

ПОЛНОЕ ОПИСАНИЕ

предлагаемого товара

ЭЛААМОДА ООО в качестве участника в рамках участия в электронном аукционе под кодом ՀՀԱՆՇՕԾ-ԷԱՃԱՊԶԲ-2026/69 ниже представляет полное описание предлагаемого им товара.

Номер лота	Предлагаемый товар		
	фирменное наименование	наименование производителя	технические характеристики
1	ЭЛААМОДА ООО	ЭЛААМОДА ООО	-